

Եվրոպական Համայնքների Հանձնաժողով



Բրյուսել, 23 ապրիլի 2009 թ.
SEC (2009) 511/2

**Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթ
Եվրոպական պառլամենտին և Խորհրդին ուղղված
Հանձնաժողովի հաղորդագրությանը կից
“2008 թվականին Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում”
Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույց**

{COM(2009) 188}
{SEC(2009) 512}
{SEC(2009) 513}
{SEC(2009) 514}
{SEC(2009) 515}
{SEC(2009) 516}
{SEC(2009) 517}
{SEC(2009) 518}
{SEC(2009) 519}
{SEC(2009) 520}
{SEC(2009) 521}
{SEC(2009) 522}
{SEC(2009) 523}

1. Նախադրյալներ և ընդհանուր գնահատական

Հայաստանը և ԵՄ-ն առաջին անգամ պայմանագրային հարաբերություններ հաստատեցին 1996 թվականին Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով, որն ուժի մեջ է մտել 1999 թվականից: Վերջինիս հիման վրա 2006 թվականի նոյեմբերին ընդունվեց ԵՀՔ շրջանակներում ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագիրը՝ հինգ տարի ժամկետով: Առաջին ընթացիկ զեկույցն ընդունվեց 2008 թվականի ապրիլին:

ՀՀ-ԵՄ համագործակցության խորհրդի, ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի և ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի միջոցով ինստիտուցիոնալ համագործակցությունը հնարավորություն է տվել երկու կողմերին առաջ շարժվել և հետևել ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացմանը:

2008 թվականի փետրվարին Հայաստանում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության բացումը նպաստեց ՀՀ-ԵՄ երկկողմ հարաբերությունների հետագա զարգացմանը:

Այս փաստաթուղթը ներկայացնում է 2008 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԵՀՔ շրջանակներում ՀՀ-ԵՄ Գործողությունների ծրագրի իրականացման ընդհանուր առաջընթացը, ընդ որում այս ժամանակահատվածից դուրս մնացած զարգացումներն ըստ անհրաժեշտության նույնպես հաշվի են առնվել:

Այս փաստաթուղթը չի հանդիսանում Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի ընդհանուր ուսումնասիրություն:

ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում Հայաստանն առաջընթաց է արձանագրել մի շարք ոլորտներում: Այդուհանդերձ Հայաստանը դեռ պայքարում է 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո առաջացած ներքին ճգնաժամի հետևանքների դեմ, որն էլ հանգեցրեց արտակարգ իրավիճակի հայտարարմանը և ժողովրդավարական ազատության ու մարդու իրավունքների մի շարք սահմանափակումներին, մասնավորապես՝ խոսքի ազատությանը, հանրահավաքների և լրատվամիջոցների ազատությանը:

Համենայն դեպս Հայաստանը որոշակի առաջընթաց ունեցավ բարեփոխումների իրականացման գործում, որոնք սահմանում են ԵՀՔ Գործողությունների ծրագրի ներքո գերակա խնդիրները:

Առաջընթացը մասնավորապես վերաբերում է հարկային և մաքսային բարեփոխումներին, ֆինանսական ծառայություններին և մրցակցության քաղաքականությանը:

Հայաստանը ներգրավվեց աղքատության հաղթահարման և տնտեսական աճի՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հովանավորվող նոր ծրագրի մեջ, որի նպատակն է անրապնդելու Հայաստանի մակրոտնտեսական կայունությունը:

Կարևոր քայլեր են արվել բարելավելու Կառավարության որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և հասարակական կազմակերպությունների ու

քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը, չնայած դեռ շատ բան կա անելու, այդ թվում՝ ընդդիմության հետ երկխոսության հաստատումը:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի անրապնդման ուղղությամբ՝ ընդլայնելով վերջինիս գործունեության շրջանակները և անկախությունը:

Հայաստանն առաջընթաց գրանցեց տարածաշրջանային համագործակցության և հարևան երկրների հետ երկխոսության հաստատման ոլորտում, մասնավորապես՝ Թուրքիայի հետ:

Ավելին, Հայաստանի վարած քաղաքականությունը մեծամասամբ համահունչ է եղել **Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (ԸԱԱՔ)** հռչակագրերին, և Հայաստանն ընդհանուր առմամբ ակտիվ համագործակցում է ԸԱԱՔ-ին առնչվող հարցերում:

Դրական քայլեր են ձեռնարկվել նաև Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի լուծման ուղղությամբ՝ չնայած գերակշռող ճնշմանը, կապված 1994 թվականին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների կողմից ստորագրված առաջին փաստաթղթի հետ:

2009 թվականի գերակա խնդիր է ընդունված սահմանադրության իրականացումը, ինչպես նախանշված էր անցյալ տարի:

Հետագա քայլերը պետք է ուղղված լինեն քաղաքական երկխոսությանը և բարեփոխումներին, ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և խոսքի ազատությունը

2. Քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ

Նպատակներն այս ոլորտում ներառում են. ամրապնդել ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը երաշխավորող ինստիտուտների կայունությունն ու արդյունավետությունը ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման, դատաիրավական բարեփոխումների, քաղաքացիական ոլորտում բարեփոխումների և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով:

Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն

Ուժեղացել է ԵՄ-ի և Հայաստանի միջև քաղաքական երկխոսությունը:

2008 թվականի սեպտեմբերին ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացումը վերահսկելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը գլխավորում է Ազգային Անվտանգության Խորհրդի քարտուղարը:

2008 թվականի նոյեմբերին ԵՄ-ն և Հայաստանը համաձայնեցին հիմնել ԵՄ Խորհրդատվական փորձագետների խումբ՝ աջակցելու Հայաստանին ԵՀՔ Գործողությունների ծրագրի իրականացման գործում:

2008 թվականի փետրվարին կայացած նախագահական **ընտրությունները** և հետընտրական դեպքերը դանդաղեցրին օրենսդրական փոփոխությունների ընդունումը՝ նոր սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Իշխանության տարանջատմանը, դատաիրավական համակարգի անկախությանը և մամուլի ազատությանը վերաբերող օրենսդրական փոփոխությունները, դեռևս շարունակվում են:

Ընտրություններից հետո Հայաստանը հայտնվեց քաղաքական ճգնաժամի մեջ: Նախընտրական շրջանում և քվեարկության ժամանակ ընտրությունները համապատասխանում էին ԵԱՀԿ պահանջներին և միջազգային չափանիշներին, սակայն ընտրություններից հետո լուրջ խնդիրներ ծագեցին: Քվեների հաշվարկման արդյունքում պարզվեց, որ կան թերացումներ հաշվարկների և թափանցիկության մեջ, բողոքների ու բողոքարկումների ընթացակարգերն ամբողջովին արդյունավետ չէին, որն էլ չէր համապատասխանում այն չափանիշներին, որոնք էական արժեք ունեն ժողովրդավարական ընտրությունների ժամանակ, և արժեզրկեցին ամբողջ ընտրական գործընթացը:

Սա հիմք հանդիսացավ մի շարք դեպքերի, որոնք իրենց գազաթնակետին հասան մարտի 1-ին և 2-ին, որի հետևանքով 10 մարդ զոհվեց, ավելի քան 100 մարդ ձերբակալվեց, և երկրում հայտարարվեց արտակարգ իրավիճակ, որը տևեց մինչև մարտի 20-ը:

Չնայած միջազգային կոչերին՝ ազատ արձակելու մարդկանց, ովքեր, “ըստ երևույթին արհեստականորեն և քաղաքականորեն հիմնավորված մեղադրանքներով են ձերբակալվել, և ովքեր վայրագ գործողություններ կան լուրջ հանցանքներ չեն գործել”, նրանցից շատերը դեռ մինչև տարվա վերջ գտնվում էին կալանքի տակ:

2008 թվականին Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովն ընդունեց երկու որոշում (1609, 1620) Հայաստանում գործող ժողովրդավարական կառույցների գործունեության վերաբերյալ՝ մասնավորապես բարձրացնելով ընդդիմադիր կողմին աջակցողների և պառլամենտի ներկայացուցիչների կալանավորմանը, էլեկտրոնային մամուլի վրա սահմանված հսկողությանը և ազատ հանրահավաքների անցկացմանը, ինչպես նաև միայն ոստիկանության ցուցմունքների վրա հիմնված հետապնդման դեպքերին և մեղադրանքներին առնչվող հարցեր:

Հայաստանի իշխանությունը քաղաքական ճգնաժամին ուղղված որոշ միջոցներ ձեռնարկեց: ԵՄԽՎ առաջարկների կատարումը համարվեց ոչ բավարար ԵՄԽՎ մոնիտորինգի հանձնախմբի կողմից 2008 թվականի դեկտեմբերին հրապարակված բանաձևում: Որոշ քայլեր ձեռնարկվեցին 2009 թվականի հունվարին, որից հետո ԵՄԽՎն որոշեց չդադարեցնել Հայաստանի պատվիրակության ձայնի իրավունքը, և այս պատժամիջոցը հետագա քննարկումների չդրվեց՝ իշխանություններին կոչ անելով շարունակել բարեփոխումները:

2008 թվականի հունվարին նոր դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո (տես նախորդ տարվա զեկույցը), որում սահմանված հիմնական բարեփոխումներն են դատական իշխանության վերակազմակերպումը, մասնագիտացված դատարանների և դատական իշխանության տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրումը և Վճռաբեկ դատարանի դերի փոփոխումը, դատական իշխանությանն առնչվող տարբեր իրավական ակտերի լրացուցիչ փոփոխություններ/ վերանայումներ ընդունվել են, համենայն դեպս Հայաստանի համար գլխավոր խնդիրը մնում է ընդունված սահմանադրության կատարումը և դատավորների անկախության երաշխավորումը:

Քրեական օրենսգիրքը վերանայվեց 2008 թվականի առաջին կեսին՝ ներառելու համապատասխան հոդվածներ ակտիվ և պասիվ կոռուպցիայի վերաբերյալ, որոնք համահունչ են Եվրախորհրդի և Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի չափանիշներին: Որոշ գործնական քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, հիմնականում մաքսային ծառայությունում (տես 4-րդ մասը), բայց դեռ անհրաժեշտ է հետագա քայլեր էլ ձեռնարկել:

Չնայած ազգային հակակոռուպցիոն ռազմավարության ժամկետը լրացել է 2006 թվականի վերջին, Եվրախորհրդի ԳՐԵԿՈ-ի խմբի առաջարկներին համապատասխան նոր ռազմավարություն դեռ չի ընդունվել:

Քաղաքացիական ծառայության խորհուրդը շարունակում է բարելավել քաղաքացիական ծառայության հաստիքների համալրման գործընթացը, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:

Տեղական ինքնակառավարման հետ կապված՝ 2008 թվականի դեկտեմբերին Ազգային ժողովն ընդունեց Երևան քաղաքի համար նոր օրենք քաղաքապետի անուղղակի ընտրությունների վերաբերյալ:

Կառավարությունը նաև ընդունեց համայնքների միավորման համար մոտեցումների և միջհամայնքային միավորների կազմավորման հայեցակարգ՝ նպատակ ունենալով ընդլայնել համայնքները և զարգացնել վերջիններիս հնարավորությունները:

Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ

Այս ոլորտի նպատակներն են՝ ամրապնդել հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, ապահովել մամուլի անկախությունը՝ ամրապնդելով հանրային և մասնավոր հեռարձակումը կարգավորող անկախ մարմնի դերը, ապահովել ազատ հանրահավաքների անցկացումը, իրականացնել հետագա բարեփոխումներ քրեակատարողական համակարգում՝ կալանավորման պայմանները բարելավելու նպատակով, շարունակել գործադրվող ջանքերը արհմիությունների իրավունքները և աշխատանքային հիմնական չափորոշիչներն ապահովելու, ազգային փոքրամասնությունների նկատմամբ հարգանքը երաշխավորելու, կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը հասարակության մեջ և տնտեսական կյանքում ապահովելու ուղղությամբ:

Մարտի 1-ից 20-ն ընկած ժամանակահատվածի արտակարգ դրությունը հանգեցրեց արտահայտվելու ազատության և ազատ հանրահավաքների անցկացման սահմանափակմանը, այդ թվում հանրահավաքների վերաբերյալ օրենքի սահմանափակող փոփոխությունների ընդունմանը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության գործողությունների սահմանափակումների:

Հայաստանը դեռևս չի ընդունել մարդու իրավունքների վերաբերյալ ազգային գործողությունների ծրագիր:

2008 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների Պաշտպանի ինստիտուտն ընդլայնեց իր գործողությունների շրջանակը և իր անկախությունը: Մարդու իրավունքների Պաշտպանը ակտիվություն է ցուցաբերել խոշտանգումների,

սոցիալական հարցերի և այլընտրանքային զինվորական ծառայության և փոքրամասնությունների զինվորական ծառայության վերաբերյալ օրենքում փոփոխություններ կատարելու ուղղությամբ, որոնք համահունչ են Եվրախորհրդի առաջարկներին: Մարդու իրավունքների պաշտպանը լիազորվել է ուսումնասիրել նաև ռազմական անձնակազմի ներկայացրած բողոքները:

Մինչև հաշվետու տարվա վերջ Հայաստանը ՄԱԿ-ի բոլոր հատուկ ընթացակարգերին ուղղել էր հրավեր: Համեմայնդեպս, երկիրն ուներ ՄԱԿ-ի համաձայնագրի կողմ հանդիսացող մարմինների 9 ժամկետանց հաշվետվություններ:

Գրանցվել են **խոշտանգումների և վատ վերաբերմունքի** դեպքեր, այդ թվում ժամեկտային զինծառայողների շրջանում, ոստիկանության բաժանմունքներում և կալանավայրերում:

Քրեական 4 դեպք է հարուցվել 2008 թվականին, բայց առայժմ ոչ մեկը չի մեղադրվել խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի հանցանքների համար:

Հայաստանը շարունակեց քայլեր ձեռնարկել խոշտանգումների դեմ կոնվենցիայի կանավոր արձանագրության իրականացման ուղղությամբ: Այդ կապակցությամբ ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքի ներքո Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին հատկացվեց 300 000 եվրո դրամաշնորհ: Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքը փոփոխվեց 2008 թվականին՝ երաշխավորելու ծառայության քաղաքացիական բնույթը, բայց դեռևս հետագա փոփոխությունների անհրաժեշտություն կա Եվրախորհրդի չափանիշների հետ լիովին համապատասխանեցնելու նպատակով:

Կալանավայրերում պայմանները և նախնական կալանքի չարաչափումը դեռևս անհանգստության տեղիք են տալիս, սակայն Կառավարության կողմից ջանքեր են գործադրվել իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

Երկու բանտ վերակառուցվել և վերանորոգվել են 2008 թվականի ընթացքում՝ նպաստելով բանտարկյալների պայմանների բարելավմանը:

Արդարադատության նախարարությունն ընդունել է գործողությունների ծրագիր քրեակատարողական համակարգում հետագա բարեփոխումների աջակցության նպատակով:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն այցելեց Հայաստան 2008 թվականի մարտին: Հայաստանը դեռ չի արտոնել այցելության ընթացքում կազմած հաշվետվության հրապարակումը:

Դեռևս մտահոգություններ կան **խոսքի ազատության** վերաբերյալ, մասնավորապես՝ կարգավորող մարմինների անկախության շարունակական պակասի և մամուլի անբավարար բազմակարծության ուղղությամբ:

Տեղեկատվության ազատության օրենքի իրականացումը մնում է կիսատ: 2008 թվականի սեպտեմբերին Ազգային ժողովն ընդունեց իրավական փոփոխություններ, համաձայն որի հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը չի կարողանա տեղեկություններ հայտարարելու արտոնագրեր տրամադրելու մինչև 2010 թվականի հուլիս ամիսը:

2008 թվականի նոյեմբերին Կառավարությունը մի նոր մարմին ստեղծեց, որի խնդիրն է տեղական մամուլի աշխատանքը մոնիտորինգի ենթարկել և կարգավորել:

Լրատվամիջոցների ներկայացուցիչների ահաբեկման և բռնության 7 դեպք է գրանցվել 2008 թվականին: Հետագա փոփոխությունները բարելավեցին երթերի ազատության օրենքը, որն ընդունվել էր 2008 թվականի մարտին, բայց լրացուցիչ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն կա: Վերջինիս պատշաճ իրականացումը դեռ մտահոգության տեղ է տալիս: 2008 թվականին ընդդիմության կողմից ներկայացված միայն մի քանի դիմումներ են ընդունվել իշխանության կողմից:

Կառավարման մարմինները Հասարակական կազմակերպություններին ավելի հաճախ են հրավիրում մասնակցելու օրենսդրության նախագծմանը կամ օրենսդրական նախաձեռնությունների քննարկմանը: Վերջիններս նաև դիտում/հսկում են հանրային կառավարման հաստիքների համալրման ընթացակարգը և նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը: Հաստատվել է համապատասխան բոլոր շահառու կողմերի շարունակական ներգրավումն ապահովելու պաշտոնական ընթացակարգ:

Որոշակի առաջխաղացում է նկատվել 2004-2010 թթ. “Կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման” ազգային գործողությունների ծրագրի իրականացման գործում: Գործողությունների ծրագիրը հանգեցրեց **գենդերային հավասարության** վերաբերյալ օրենքի վերանայմանը: Ընտանեկան բռնության քրեականացման օրենքի նախագիծը քննարկման ընթացքում է: Ոստիկանության ծրագրերը ուղղված են ոստիկանության պատասխանատվությունների ուղեցույցի իրականացմանը՝ ի պատասխան ընտանեկան բռնությունների, բայց վերջինս դեռևս լայնորեն տարածված է, քանի որ Հայաստանում կարիք կա ընտանեկան բռնության կանխման և արդյունավետ պատժամիջոցների կիրառման կարողության զարգացման և նման իրավիճակների զոհ դարձած մարդկանց պաշտպանության:

Հայաստանն էլ ավելի ապակենտրոնացրեց Ազգային Հանձնաժողովի և **երեխայի** իրավունքների պաշտպանության ուղղությամբ տարածաշրջանային բաժանմունքների դերը: Համեմայն դեպս այս հաստատությունների արդյունավետությունը կարիք ունի հետագա բարելավման:

Աշխատանքային իրավունքի և աշխատավայրում աշխատողների իրավունքների ոլորտում Հայաստանը կայուն զարգացման և լավ կառավարման համար ընդգրկվել է Արտոնությունների ընդհանրացված համակարգում (GSP+) 2009-2011 թվականների համար (տես 4-րդ մասը):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել Աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագիծը՝ գործադուլների դեպքում աշխատողների իրավունքների կարգավորելու ուղղությամբ:

2008 թվականի ապրիլին Հայաստանը Եվրախորհրդին ներկայացրեց վերանայված Եվրոպական Սոցիալական Խարտիայի դիմումի հաշվետվություն աշխատանքի, վերապատրաստումների և հավասար հնարավորությունների հարցերի վերաբերյալ:

Արտաքին և անվտանգության քաղաքականության, հակամարտությունների կանխման և ճգնաժամի կառավարման շուրջ համագործակցություն

Հայաստանը համահունչ է **Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (ԸԱԱՔ)** հռչակագրերին: Այն այդպես է առաջնորդվել շատ դեպքերում (ավելի քան 80 տոկոսով): Հայաստանը համագործակցում է ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ, ինչպես նաև ՄԱԿ-ի` Թմրանյութերի և հանցավորության գրասենյակի փորձագետների հետ, Ինտերպոլի, Համաշխարհային մաքսային կազմակերպության, ԱՊՀ-ի և ԵԽ-ի հետ ահաբեկչության հետ կապված տեղեկատվության փոխանակման շրջանակներում:

Հայաստանը հաջող կերպով համագործակցում է ՄԱԿ-ի Հակաահաբեկչական հանձնաժողովի հետ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N1373 որոշման ներքո:

Ոչ մի առաջընթաց չի գրանցվել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության հաստատման և ստորագրման ուղղությամբ:

Տարածաշրջանային համագործակցության ամրապնդում

Հայաստանը մասնակցել է Հարավային Կովկասի միասնական սահմանային կառավարման ծրագրին (տես 5-րդ մասը):

Հայաստանը մասնակցում է Հարավային Կովկասի Թմրանյութերի դեմ պայքարի ծրագրին` «Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի, և այս երկրների ու ԵՄ-ի միջև թմրանյութերի քաղաքականության օրենսդրության, նորմերի և ստանդարտների աստիճանական համապատասխանեցման խրախուսման նպատակով» (տես 5-րդ մասը):

2008 թվականի դեկտեմբերին նոր գործադիր մարմնի համար Կովկասյան երեք երկրների ազգային ներկայացուցիչների հաստատմամբ **Կովկասում Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը (REC-Caucasus)** սկսեց գործել իր նոր կանոնադրության ներքո:

Հայաստանն աջակցեց վերջինիս նոր վարչական կառուցվածքի հիմնադրման գործում: Տարածաշրջանային Բնապահպանական կենտրոնը կարևոր գործիք է` խրախուսելու տարածաշրջանային համագործակցությանը և Հարավային Կովկասի ապագայի կայունությանը:

Հայաստանը մասնակցում է «Սևծովյան համադաշնություն» տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությանը, և 2008 թվականի դեկտեմբերի 4-ին Բաքվում մասնակցեց **TRACECA**-ի նախարարական համաժողովին, որտեղ կայացվեցին երկու կարևոր որոշում, այն է` միացնել TRACECA-ն անդրեվրոպական ցանցերի Հարավարևելյան առանցքին և հզորացնել գործող TRACECA-ի կառույցները:

Հայաստանն աջակցեց **Կայունության և համագործակցության կովկասյան դիրքորոշման թուրքական նախաձեռնությանը:**

Մինչդեռ Թուրքիան Հայաստանի հետ իր ցամաքային սահմանը պահում էր փակ, երկկողմ հարաբերություններ հաստատելու հեռանկարը բարելավվեց հայկական կողմի հրավերով 2008 թվականի սեպտեմբերին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլի Երևան կատարած այցից հետո:

Հայաստանը չեզոք և կառուցողական վերաբերմունք դրսևորեց 2008 թվականի օգոստոսին Վրաստանում առկա կոնֆլիկտի նկատմամբ:

Հարավային Կովկասում Տարածաշրջանային երիտասարդական համագործակցությունը կայանում էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի աջակցությամբ Հարավային Կովկասի երիտասարդական ցանցի շրջանակներում: Հայ-ադրբեջանական երիտասարդական խաղաղ ջոկատներ հիմնվեցին 2008 թվականի օգոստոսին Հարավային Կովկասում խաղաղապահ գործընթաց կազմակերպելու նպատակով:

Նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը

Թեև լարվածությունը դեռ առկա է, համենայն դեպս որոշակի առաջխաղացում է արվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ուղղությամբ:

2008 թվականի հունիսին Սանկտ Պետերբուրգում և նոյեմբերին Մոսկվայում Հայաստանի և Ադրբեջանի նախագահներն ունեցան երկու հանդիպում՝ բանակցելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ: Ինչպես նաև հանդիպեցին երկու երկրների արտաքին գործերի նախարարները, այդ թվում նաև Հելսինկիում 2008 թվականի դեկտեմբերին ԵԱՀԿ նախարարական խորհրդի շրջանակներում:

Նոյեմբերին Մոսկվայում կայացած հանդիպման արդյունքում ստորագրվեց համատեղ հռչակագիր՝ նպաստելու «Հարավային Կովկասում իրավիճակի բարելավմանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորման միջոցով»՝ «համաձայնության գալով, որ խաղաղության կարգավորումը պետք է ուղեկցվի բոլոր ասպեկտների և փուլերի իրավական հիմունքներով կապված միջազգային երաշխավորագրերով» և «կարևորելով կարգավորման համար գործադրվող ջանքերի շրջանակում վստահությունն ամրապնդելու նպատակով միջոցներ ձեռնարկելու պայմանների հաստատման խրախուսումը»:

Սա երկու երկրների միջև առաջին համատեղ ստորագրված փաստաթուղթն է 1994 թվականից ի վեր:

Այս զարգացումները համալրում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար գործադրվող ընթացիկ ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի համատեքստում:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

Մակրոտնտեսական համակարգը և գործող շուկայական տնտեսությունը **Մակրոտնտեսական զարգացումը**

Վեց տարի շարունակ երկնիշ իրական աճի և արտարժույթի լայնածավալ ներհոսքի պայմաններում, 2008 թվականին ՀՆԱ-ն աճել է միայն 6.8%-ով: Սա հիմնականում չորրորդ եռամսյակում տնտեսական գործունեության կտրուկ անկման արդյունք էր՝ ֆինանսական և տնտեսական գլոբալ ճգնաժամի պայմաններում: Աճը էապես դանդաղել է, մասնավորապես շինարարության և քիմիական արդյունաբերության ոլորտներում:

Մետալուրգիայի և ադամանդագործության ոլորտները ազդանշում են հայաստանյան տնտեսության խնդիրների մասին: Սննդի ոլորտում գրանցվել է էական աճ, ի հակադրություն արտահանման դաշտում առկա խնդիրներին:

2008 թվականին սղաճի մակարդակը միջինում կազմել է 8.9%՝ վառելիքի և սննդամթերքի գների աճի հետ մեկտեղ, որոնց թվում առկա են մենաշնորհային գնագոյացման ենթական ապրանքներ, որոնք ներմուծվում են սահմանափակ թվով ընկերությունների կողմից: Այնուամենայնիվ, պետք է նշել որ սղաճի մակարդակը մնացել է համեմատաբար ցածր՝ այլ երկրներում նույն ոլորտների համեմատ: Սա հետևանք է դրամավարկային խիստ քաղաքականության, զուսպ հարկաբյուջետային դիրքի և ուժեղ հայկական դրամի, ինչը հնարավորություն է տվել Հայաստանին՝ խուսափել ներմուծվող ապրանքների արժեզրկման ճնշումներից:

Ինչևէ, սա բերել է արտարժույթի պահուստների կրճատման ևս: 2008 թվականի վերջին վարկավորումը շարունակում է մնալ ուժեղ դիրքերում՝ հասնելով 17.4% վարկ/ՀՆԱ ցուցանիշի: Սա կարող է լինել պահուստային դրամի մեծ աճի արդյունք, որն առաջացել է արտարժույթի փոխանակման արժեքի միջամտությամբ:

Ֆիսկալ կարգապահությունը պահպանվել է՝ 2008 թվականի ընթացքում եկամուտների հավաքագրման ավելի բարենպաստ պայմանների, ԱԱՀ հավաքագրման աճի, ինչպես նաև կատարվող որոշակի ծախսերի շնորհիվ: Արդյունքում ֆիսկալ դեֆիցիտի արժեքը մոտեցել է ՀՆԱ-ի 1.2%-ին: 2008 թվականին ներկայացվել են մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եղել եկամուտների բարելավմանը, ինչպես նաև հարկային քաղաքականության և վարչարարության թերացումներին, քանի որ հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը դեռևս մնում է ցածր: Միջոցառումներ են իրականացվել նաև փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում հարկման միջավայրի բարելավման ուղղությամբ՝ փորձելով նվազեցնել գործարարությամբ զբաղվելու համար պահանջվող ծախսերը, բարձրացնել արտահանման ներուժը, ինչպես նաև դյուրացնել արտադրական բազայի դիվերսիֆիկացումը:

Թեև ընթացիկ տրանսֆերտներում (օրինակ՝ դրամական փոխանցումներ) և եկամտային հաշիվներում գրանցվել է հավելուրդ, 2008 թվականին ընթացիկ հաշվի դեֆիցիտը մեծացել է՝ հասնելով մոտ 12.6%՝ վառելիքի և սննդամթերքի գների աճի և ներմուծման տատանվող պահանջարկի հետ միասին: Արտահանումը ևս ցածր էր շատ արտահանվող ապրանքների գների անկման, ադամանդի մշակման մրցակցայնության նվազեցման պատճառով: Ընթացիկ հաշվի ընդլայնումը պահանջում է արագացված կառուցվածքային բարեփոխումներ՝ արտադրության դիվերսիֆիկացման և արտահանման ներուժի մեծացման նպատակով:

Ֆինանսական ոլորտը չի կրել էական ազդեցություն ֆինանսական ճգնաժամի արդյունքում: Բանկային վերահսկողությունը բարելավվել է, և հայկական բանկերը ներկայացրել են բավարար ցուցանիշներ՝ կապված եկամտաբերության, հիմնական կապիտալի համապատասխանության և վարկային փաթեթի որակի հետ: Բարելավվել է նաև սպառողների պաշտպանությունը: Այնուամենայնիվ, արտաքին վարկերի սահմանափակությունը և բարձր տոկոսադրույքները խոչընդոտ են հանդիսանում վարկերի հետագա աճի և ֆինանսական միջնորդության խորացման համար:

Ավանդների աճի բացակայությունը՝ վարկերի վերջին ընդլայնումների համեմատ ևս բարձրացրել է արտաքին ֆինանսավորման մակարդակը, ինչը կարող է դառնալ

հավանական ռիսկի աղբյուր: Հայկական բանկերը ընդլայնել են նաև իրենց հիպոթեկային վարկերի փաթեթը, ինչը նրանց դարձնում է ավելի խոցելի գույքային գների տատանումների նկատմամբ:

2008 թվականի մայիսին հաջողությամբ ավարտված ԱՄՀ “Աղքատության կրճատման և տնտեսական աճի աջակցության” (PRGF) ծրագրի ավարտից հետո և աղքատության մակարդակի էական նվազեցման արդյունքում (ներկայումս մոտ 25%), Հայաստանը մուտք գործեց ԱՀՄ ԱՆՏԱԱ նոր փուլ, որն ուղղված է Հայաստանի մակրոտնտեսական կայունության ու տնտեսական գործունեության ամրապնդմանը, ինչպես նաև աղքատության հետագա կրճատման պայմանների ստեղծմանը:

Ջրաղվածություն և սոցիալական քաղաքականություն

Հայաստանում գործում են սոցիալական և զբաղվածության քաղաքականությունը կանոնակարգող հիմնական օրենքները, սակայն աշխատանքային օրենսգիրքը, ինչպես նաև զբաղվածության և սոցիալական ապահովության մասին օրենսդրությունը գործազրկության դեպքում, սոցիալական օժանդակության և պետական կենսաթոշակների մասին օրենսդրությունը դեռ պետք է ամբողջովին իրականացվի:

2008 թվականի հոկտեմբերին հանրային քննարկումների արդյունքում Հայաստանն ընդունեց **աղքատության հաղթահարման** ռազմավարություն, որը հայտնի է նաև “Կայուն զարգացման ծրագիր 2008-2021” անվանմամբ: Ռազմավարությունը անմիջապես հաջորդեց ԱՄՀ Աղքատության նվազեցման և տնտեսական աճի աջակցության նախորդ ծրագրի հաջող իրականացմանը և աղքատության մակարդակի էական նվազեցմանը: Ռազմավարությունն ուղղված է կրճատելու աղքատությունը 14%-ով և ծայրահեղ աղքատությունը 2.1%-ով մինչև 2012 թվականը: Ավելին, մինչև 2010 թվականը ռազմավարությունը նախատեսում է իրականացնել մի շարք բարեփոխումներ՝ ուղղված ստվերային տնտեսության կրճատմանը և աշխատանքի վարձակալության և աշխատանքային պայմանների ազատականացմանը:

Համաձայն ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ բնակչության 25 %-ն ապրում է աղքատության շեմից ցածր պայմաններում, իսկ 4%-ն էլ գտնվում է ծայրահեղ աղքատության մեջ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դոնոր կազմակերպությունների հետ համատեղ իրականացնում է ծրագրեր՝ ուղղված Պետական **զբաղվածության** ծառայությունների վարչարարական կարողությունների բարելավմանը:

2008 թվականի դեկտեմբերին ավելի քան 90.000 մարդ պաշտոնապես գրանցվել է որպես գործազուրկ (6.3%), որոնց թվում մեծ մաս են կազմում (20%) երիտասարդները:

Ինչ վերաբերում է **սոցիալական երկխոսությանը**, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սոցիալական գործընկերների հետ համատեղ մշակում է կոլեկտիվ պայմանագրերի նախագծեր: Ավելին, 2008 թվականի մայիսին ձևավորվել է աշխատանքային խումբ՝ կառավարության և սոցիալական գործընկերների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ եռակողմ կոմիտեի ձևավորումն արտացոլելու նպատակով: Հայաստանը շարունակում է իրականացնել Արժանապատիվ աշխատանք ծրագիրը 2007–2011թթ. համար՝ Աշխատանքի Միջազգային Կազմակերպության աջակցությամբ:

Սոցիալական ներգրավվածության և պաշտպանության առումով, 2008 թվականի հունվարի դրությամբ Հայաստանում կենսաթոշակները բարձրացել են մոտ 60%-ով: 2008 թվականի դեկտեմբեր ամսին միջազգային ֆինանսական կառույցների հետ քննարկումներից հետո, ՀՀ կառավարությունը հաստատեց կենսաթոշակների բարեփոխման փաստաթուղթ: Ըստ նախատեսված համակարգի, ներդրվում է պարտադիր աճողական կենսաթոշակային ապահովագրության համակարգ՝ հիմնված մինչև 2010 թվականը կենսաթոշակային ֆոնդերի զարգացման վրա:

Կայուն զարգացման Ազգային խորհուրդը, որը հիմնադրվել է 2002 թվականին, սակայն չի գործել, 2008 թվականին ակտիվացվել է և անցկացրել 2 հանդիպում՝ քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Հայաստանը ևս մշակել է գործողությունների ծրագիր՝ որն ուղղված է Կայուն զարգացման ծրագրի իրականացմանը 2009 – 2012 թվականների համար: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու է գործողությունների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացման և համակարգման համար:

Գյուղատնտեսության կայուն զարգացման ծրագրի իրականացումն ունի շարունակական բնույթ և գյուղական ենթակառուցվածքների նորացումը շարունակվում է իրականացվել միջազգային դոնոր կազմակերպությունների և ՀՀ կառավարության բարձր աջակցության ներքո:

4. ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ, ՇՈՒԿԱ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ

2008 թվականին ԵՄ ապրանքների արտահանումը Հայաստան շարունակել է աճել (տարեկան աճը կազմել է 10,6%), մինչդեռ հայկական ապրանքների արտահանումը ԵՄ նվազել է 10,2%-ով, ի տարբերություն վերջին հինգ տարիներին գրանցված ընդհանուր միտումների (տարեկան միջին աճը կազմել է 18.6 %): ԵՄ դարձել է Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերը (2007 թվականին Հայաստանի արտաքին առևտրում իր մասնաբաժինը կազմելով 38.5%, անցնելով Ռուսաստանին , որի մասնաբաժինը կազմել է 15.8%): Ամեն դեպքում, **երկկողմ առևտուրը** դեռևս շարունակում է ունենալ փոքր ծավալեր և ապրանքների կառուցվածքում ունի ոչ բավարար դիվերսիֆիկացիա, հատկապես, եթե խոսքը գնում է հայկական ապրանքների արտահանմանը:

ԵՄ կանոնակարգի ներքո Արտոնությունների ընդհանրացված համակարգի (ԱԸՀ) կիրառման շրջանակներում 2006-2008 թվականներին Հայաստանն օգտվել է ԱԸՀ մեխանիզմներից, իսկ 2009-2011թթ. ԱԸՀ նոր կանոնակարգի շրջանակներում Հայաստանին կայուն զարգացման և արդյունավետ կառավարման համար շնորհվել է հատուկ առևտրային պայմաններից օգտվելու իրավունք (GSP+):

2008 թվականի մայիսին ավարտվեց ԵՀԶ Գործողությունների ծրագրով նախատեսված ՀՀ-ԵՄ Ազատ առևտրի համաձայնագրի ստորագրման հնարավորության մասին ուսումնասիրությունը: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ խորը և ամբողջական ազատ առևտրի համաձայնագիրը (ԽԱԱԱՀ) տնտեսապես շահավետ է Հայաստանի համար, սակայն Հայաստանը դեռևս պատրաստ չէ նման հեռանկարային ազատականացմանը: Համաձայն ուսումնասիրությունների արդյունքների, մեկնարկել են ԽԱԱԱՀ համար Հայաստանում անհրաժեշտ պայմանների ստեղծման նախապատրաստական աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում ԽԱԱԱՀ

Նախապատրաստական գործընթացում Հայաստանն ունեցել է որոշակի առաջընթաց, սակայն դեռևս անհրաժեշտ են լրացուցիչ զարգացումներ մի քանի հիմնական ոլորտներում, որոնք էական նշանակություն ունեն այդ բանակցությունների մեկնարկի համար:

Նախապատրաստական գործընթացն արագացնելու նպատակով, ինչպես նաև սահմանելու այն գերակա բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են Հայաստանին ԽԱԱՀ բանակցությունները սկսելու համար, հաշվետու ժամանակահատվածից հետո, 2009 թվականի փետրվար ամսին Եվրոպական Հանձնաժողովը Հայաստանում իրականացրեց փաստահավաք առաքելություն:

2008 թվականի օգոստոսին հարկային պետական ծառայությունը և մաքսային պետական կոմիտեն միավորվեցին և կազմեցին մեկ միասնական մարմին, որն այժմ կոչվում է ՊԵԿ-ը պատասխանատու է պետական բյուջեի եկամուտների հավաքագրման, ինչպես նաև հարկային և մաքսային վարչարարության համար: 2008 թվականի հունիսին վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց նոր խորհուրդ, որը պատասխանատու է հարկային և մաքսային վարչարարության ոլորտում լայնածավալ բարեփոխումների իրականացումը վերահսկելու համար: ՊԵԿ-ը նախաձեռնեց նաև երկար սպասված առևտրի պարզեցման բարեփոխումների գործընթացը: 2008-2012 թվականների համար ՊԵԿ նախագահի կողմից հաստատվեց Մաքսային վարչարարության համապարփակ ռազմավարություն՝ հիմնված Եվրոպական Հանձնաժողովի առաջարկությունների և ԵՀ մաքսային մոդելի (EC Customs Blueprints) վրա:

2008 թվականի օգոստոսին որոշակի փոփոխություններ կատարվեցին ՀՀ մաքսային օրենսգրքում՝ ներառելով նոր դրույթներ մաքսային բրոկերների իրավունքների և պարտավորությունների, մաքսային հսկողության, մաքսագերծման գործընթացի պարզեցման, սահմանային անցակետերում ընտրողականության ուղիների ներդրման (բացի օդանավակայաններից), հետաձգված վճարումների և բանկային երաշխիքային մեխանիզմների վերաբերյալ: Ինքնահայտարարագրման և էլեկտրոնային հայտարարագրման կիրառման ընդլայնումն ակնհայտորեն դրական ազդեցություն է ունեցել կռուպցիայի նվազեցման, ինչպես նաև ԱՀԿ մաքսային գնահատման համատեղելի կանոնների իրականացման վրա:

Իրավասու մարմինները խրախուսում են կիրառել մաքսային բրոկերների ինստիտուտը՝ մաքսային հայտարարագրերի ներկայացման համար, և որոշ մաքսատներում և մաքսային պահեստներում ստեղծվել են մաքսային բրոկերների և օպերատորների կողմից ինքնահայտարարագրման համակարգեր: Միջոցներ են ձեռնարկվել նվազեցնելու հետաձգումների թիվը որոշ մաքսակետերում: Պարզեցվել է Առևտրի Համաշխարհային Մենեջեր (Trade World Manager) համակարգի միջոցով հաշվարկելու գործընթացը, ինչպես նաև մաքսային տուրքերի վճարման համակարգը: Տուրքերը հաշվարկվում են ավտոմատ կերպով՝ կրճատելով փաստաթղթերի թիվը և օպերատորների ու մաքսային պաշտոնյաների միջև հաղորդակցությունը:

Ջանքեր են գործադրվել բարելավելու մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի ներկայացումը ԵՊԿ նախագահին առընթեր խորհրդատվական խմբին, ինչպես նաև թափանցիկությունը: Թափանցիկությունն ապահովելու նպատակով բարելավվել է մաքսային մարմնի ինտերնետային կայքը, որը ներկայումս տալիս է առցանց հարց/պատասխանի հնարավորություն: 2008 թվականի ապրիլին բացվել է թեժ գիծ՝ մաքսային ծառայությունների բարելավման վերաբերյալ առաջարկներ, ինչպես նաև

բողոքներ ստանալու նպատակով: 2008 թվականին ընդունվել են նաև էթիկայի կանոններ՝ հիմնված Արուշայի հայտարարագրի և տարբեր զարգացած երկրների փորձի վրա: ՊԵԿ-ն կազմակերպել է մի շարք վերապատրաստման դասընթացներ աշխատակազմի համար օտար լեզուների, տեղեկատվական տեխնոլոգիաների և մաքսային օրենսդրության առանձնահատուկ թեմաների վերաբերյալ: Հայաստանը պետք է ավարտի իր մաքսային վարչարարության ռազմավարության արդիականացումը և ապահովի, որպեսզի մաքսային մարմինը չկորցնի առանձնահատուկ և կարևոր գործառույթները հարկային ծառայության հետ միավորվելու և ՊԵԿ դառնալու արդյունքում: Հայաստանը պետք է նաև շարունակի մշակել և զարգացնել ռիսկերի վերլուծության համակարգը, հատկապես՝ հետմաքսագերծման և աուդիտի գործառույթները, միջոցներ ձեռնարկի իրականացնելու միջազգային կարևոր մաքսային գործիքները, վերացնի մաքսային վարչական վճարները և բարելավի մաքսային արժեքների հաստատումը՝ համաձայն ԱՀԿ ստանդարտների:

Ինչ վերաբերում է ապրանքների ազատ տեղաշարժին և տեխնիկական կանոնակարգերին, ապա Հայաստանը շարունակում է իր առաջընթացը ԵՄ կարգավորիչ և ստանդարտների համակարգն ընդունելու ոլորտում: Մշակման փուլում են գտնվում ստանդարտացման, համապատասխանության հավաստման, հավատարմագրման և չափագիտության մասին օրենքները: Որոշակի առաջընթաց կա ԵՄ ոլորտային դիրեկտիվների ներդրման և միջազգային ստանդարտների ընդունման ուղղությամբ: Շարունակվում է որակի ենթակառուցվածքների անհրաժեշտ բարեփոխումների ռազմավարության վերանայումը և մարդկային ռեսուրսների զարգացումը: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է ավելի մեծ առաջընթաց ԵՄ ստանդարտների ներմուծման, օրենսդրության համապատասխանեցման, որակի ենթակառուցվածքի ձևավորման և մարդկային ռեսուրսների հզորացման ոլորտներում: Նման առաջընթացը հնարավորություն կընձեռի՝ դիտարկել երկարաժամկետ հեռանկարում Արդյունաբերական ապրանքների համապատասխանության հավաստման և ընդունման համաձայնագրի վերաբերյալ բանակցությունների բացման հնարավորությունը:

Սանիտարական և բուսասանիտարական խնդրների առումով պետք է նշել, որ Հայաստանն ընդունել է իրականացման օրենսդրությունը, շարունակել է անասնաբուժության մասին օրենքի նախագծի պատրաստման աշխատանքները և հզորացրել է համապատասխան հաստատությունները, այդ թվում՝ լաբորատորիաների կարողությունները: Գործողությունների ծրագրի նպատակներն իրականացնելու, ինչպես նաև ԵՄ արտահանման ծավալներն ավելացնելու համար, Հայաստանը պետք է հստակ առաջընթաց ունենա համապատասխան ոլորտում: Հայաստանը մասնակցել է Եվրոպական Հաճնաժողովի «Ավելի լավ ուսուցում ավելի անվտանգ սնունդ» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքային սեմինարներին:

Հայաստանը մշակել է համապարփակ և ամբողջական ծրագիր՝ բարելավելու **գործարար միջավայրը**: 2008 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանը գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն» հայեցակարգը: Փաստաթղթում ներկայացված են առաջարկներ 18 ամսում իրականացվելիք բարեփոխումների վերաբերյալ, ինչպես օրինակ վարչական ընթացակարգերի կրճատում, կարգավորիչ դաշտի վերաբերյալ իրազեկում, ինչպես նաև օրենսդրության կիրարկման վարչարարության բարելավում:

2009թ. «Սպառողական վարկավորման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը կնպաստի ֆինանսական ոլորտում սպառողների շահերի հետագա պաշտպանությանը և

գործարար ընդհանուր միջավայրի բարելավմանը: «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2008 թվականի սեպտեմբերին: Ֆինանսական համակարգի հաշտարարի գործունեությունը մեկնարկել է հաշվետու ժամանակաշրջանից անմիջապես հետո, 2009 թվականի հունվարին:

Հայաստանը Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի աջակցությամբ մշակել և ներկայացրել է ձեռնարկությունների հիմնադրման արգելքները նկարագրող մի համապարփակ ուսումնասիրություն:

«Ընկերությունների մասին» ՀՀ օրենքի առումով պետք է նշել, որ 2008 թվականի դեկտեմբերին փոփոխվել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքը: Հայաստանը նաև շարունակել է ընկերությունների գրանցման գործընթացի պարզեցումը և նախատեսում է գործի դնել մեկ պատուհանի սկզբունքը:

Կառավարությունն աշխատում է նաև կրճատել լիցենզիաներ պահանջող գործունեությունների թիվը: Կորպորատիվ կառավարման օրենսգիրքը գտնվում է մշակման փուլում: Հայաստանը մշակել է ընկերությունների օրենսդրական համակարգի արդյունավետության և հավաստիության հզորացման վերաբերյալ առաջարկների մատրիցա և ծրագրում է այն վերանայել: Թեև գոյություն ունի ընկերությունների գրանցման պետական ռեգիստր, դեռևս գոյություն չունի պաշտոնական պետական տեղեկագիրը դրանց վերաբերյալ: Անհրաժեշտ է բարելավել թափանցիկությունը: Ավելին, Կայուն զարգացման ծրագիրը (տես բաժին 3) իր մեջ ներառում է մի շարք դրույթներ, որոնք դյուրացնում են ընկերությունների հիմնադրման և գրանցման գործընթացները:

Հայաստանը շարունակում է որոշակի առաջընթաց ունենալ ֆինանսական ծառայությունների ոլորտում: 2006 թվականից սկսած ՀՀ Կենտրոնական Բանկը հադիսանում է ֆինանսական ծառայությունների ոլորտում միակ վերահսկիչ մարմինը: Շարունակվում է բանկային գործի արդյունավետ վերահսկողության նպատակով Բազել II սկզբունքների համար օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացը (համաձայն հայաստանյան իրականությանը): Փոփոխություններ են կատարվել ՀՀ Կենտրոնական Բանկի երկրորդ կանոնակարգում, որոնք ուղղված են ավելի ճկուն և արդյունավետ դարձնելու այնպիսի ռիսկերի կառավարումը, ինչպիսիք են գնային ռիսկերը, տոկոսադրույթների ռիսկերը և արտարժույթի փոխանակման ռիսկերը: Հայաստանը սկսել է իրականացնել 2007 թվականին ընդունված «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքները:

Այլ կարևոր ոլորտներ

ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հարկային դաշտի բարեփոխումների ծրագիրը բավական համապարփակ է, սակայն անհրաժեշտ է նաև ներառել լրացուցիչ տարրեր և ԱՄՀ կողմից արված առաջարկությունները՝ միջազգային և ԵՍ ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով:

Հարկային միասնական օրենսգիրքը դեռևս ենթակա է որդեգրման: 2008 թվականի աշնանային նստաշրջանի ժամանակ Ազգային ժողովն ընդունել է ՓՄՁ-ների համար հարկային դաշտի բարելավման օրենքների փաթեթ:

Փոփոխություններ են կատարվել ԱԱՀ-ի, եկամտահարկի և շահութահարկի մասին օրենսգրքերում: Հաշվապահական հաշվառման մասին օրենքի համաձայն, այն բիզնեսը, որն ունի 100 միլիոն դրամ շրջանառություն (175.000 եվրո), ենթակա է պարզեցված հարկման: Պարզեցված հարկի այս սահմանումը թերևս համաձայնեցված չէ:

Ներկայումս մշակվում են հարկային օրենսդրության հետագա փոփոխությունները, որոնք մասնավորապես ուղղված են ՓՄՁ գործունեության պարզեցմանը: ԱՀԿ պարտավորություններին համապատասխանեցնելու նպատակով 2009 թվականի հունվարից ԱԱՀ-ն կիրառվում է նաև գյուղատնտեսական ապրանքների վրա՝ 58 մ. դրամ ստորին շեմով (102.000 եվրո): 2008 թվականի օգոստոսին կառավարությունը հաստատել է հարկային վարչարարության ռազմավարության փաստաթուղթ 2008-2011 թվականների համար: Ռազմավարության հիմնական նպատակներն են՝ խոշոր հարկատուների հարկման հետևողականությունն ու պատեհաժամությունը, փոքր ձեռնարկությունների նկատմամբ արդյունավետ «փափուկ» հարկային վարչարարության կիրառումը, կոռուպցիայի հասցեագրումը, կանավոր համապատասխանությունը, հարկային աուդիտի նոր քաղաքականությունը, հարկային մարմինների և հարկային վարչարարության նոր կառավարման համակարգը, ավտոմատացումը: Հաստատվել է գործողությունների ծրագիրը իր ժամանակացույցով և բացահայտվել են ռիսկային գործոնները: Արտաքին աջակցությամբ շարունակվում են իրականացվել աշխատանքներ հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ՝ համաձայն Եվրոպական հանձնաժողովի հարկաբյուջետային մոդելների: Հիմնվելով նոր սահմանման վրա, խոշոր հարկատուների գործերը տեղափոխվել են խոշոր հարկատուների գործերով զբաղվող տեսչություն, որը ստեղծվել է՝ միավորելով նախկինում գոյություն ունեցող ոլորտային հարկային տեսչությունները:

Թափանցիկությունն ուժեղացնելու նպատակով հարկային պետական ծառայության բողոքարկման հանձնաժողովի բոլոր լսումները ներկայումս հասանելի են հանրության համար: Առաջընթաց է գրանցվել ԱԱՀ-ի փոխհատուցման ոլորտում, մասնավորապես՝ գոյություն ունեցող պարտքի մարման առումով:

Մրցակցության քաղաքականության առումով հարկ է նշել, որ իրավական և ինստիտուցիոնալ համակարգը համեմատաբար լավ է ձևավորված, թեև դեռևս ամբողջովին չի ներդաշնակեցված ԵՄ կանոնակարգերին: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեն գործում է որպես անկախ մարմին: Սակայն ամեն դեպքում կոմիտեի տեսչական իրավասությունները բավական սահմանափակ են: Հիմնական մարտահրավերները դեռևս մնում են կանոնակարգերի կիրարկումը, համապատասխան մարդկային ռեսուրսների առկայությունը և համապատասխան մարմինների կարողությունների ուղղորդումը մենաշնորհների և օլիգոպոլիաների խնդիրներին: 2007 թվականին կատարված «Տնտեսական մրցակցության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնց մասին հայտարարվել է անցյալ տարի, արդեն իրականացվել են և ՏՄՊԿ-ն լիազորվել է վերահսկելու պետական աջակցությունը: Իրականացման մեխանիզմները դեռևս պետք է սահմանվեն:

Մտավոր սեփականության իրավունքների ոլորտում 2008 թվականի հունիսին Ազգային ժողովն ընդունել է “Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին”, ինչպես նաև “Ապրանքանշանների մասին” ՀՀ օրենքները, որոնք ուժի մեջ են մտել 2009 թվականի հունվարին: Բույսերի նոր տեսակների միջազգային կոնվենցիայի (UPOV կոնվենցիա) հաստատման առումով չեն եղել որևէ զարգացումներ: Թեև բարելավվել և ուժեղացվել է քրեական օրենսգրքը (մինչև 2 տարի կալանք), մտավոր

սեփականության խնդիրները դեռևս մնում են անլուծելի մասնավորապես իրավաբանների և դատավորների ոչ պատշաճ վերապատրաստման, ինչպես նաև դատական համակարգի նկատմամբ վստահության բացակայության պատճառով: Մաքսային մարմինները և ոստիկանությունը չեն կարողանում օգտվել ի պաշտոնե նրանց տրված իրավասություններից:

2008 թվականի հունիսին ՀՀ կառավարությունն ընդունել է պետական **գնումների մասին** ենթաօրենսդրությունը, որն ուժի մեջ է մտել սեպտեմբերին : 2008 թվականի դեկտեմբերին ՏՀԶԿ (SIGMA) կողմից իրականացված ազգային օրենսդրության՝ ԵՍ ստանդարտներին համապատասխանության ուսումնասիրության, ինչպես նաև Համաշխարհային Բանկի կողմից իրականացված օրենքի գնահատման արդյունքում, Հայաստանը մշակում է պետական գնումների նոր ռազմավարություն: Ներկայումս կառավարության հետ քննարկվում են գնումների գործակալության վարչական կարողությունների հզորացման առաջարկները: Հայաստանը նաև վերանայում է բողոքների համակարգը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից այն տեղափոխելու և անկախ բողոքարկման խորհուրդ ձևավորելու առումով: Եվ վերջապես Հայաստանը նաև սերտորեն համագործակցում է Համաշխարհային Բանկի հետ գնումների էլեկտրոնային համակարգի ռազմավարության մշակման ուղղությամբ:

Հայաստանն ավարտել է նախապատրաստական աշխատանքները գլոբալ վիճակագրական գնահատման ուղղությամբ, որոնք նախատեսված էին 2009 թվականի առաջին կեսին, սակայն այստեղ գոյություն ունի ժամանակակից ՏՏ սարքավորումների պակաս: Հայաստանը նաև շարունակել է վիճակագրական համակարգը ԵՍ ստանդարտներին համապատասխանեցնելու իր աշխատանքները:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում շարունակվել են աշխատանքները ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտների ներդրման ուղղությամբ՝ ծրագրելով դրանք ամբողջովին կիրառության մեջ դնել մինչև 2009 թվականի վերջ: 2009 թվականի սկզբից ի վեր բանկերում կիրառվում են ՖՀՄՍ-ները: Այլ ֆինանսական հաստատությունները, ինչպես օրինակ վարկային կազմակերպությունները, ապահովագրական և ներդրումային ընկերությունները պատրաստվում են ներդնել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները 2010 թվականի հունվարից: ՖՀՄՍ պաշտոնական ներմուծումը ծրագրվում է իրականացնել Ստանդարտների կիրառման կոմիտեի կողմից, որը ներկայումս գտնվում է ձևավորման փուլում: Ֆինանսների նախարարությունը ևս պատրաստվում է իրականացնել իրավական դաշտի որոշակի բարեփոխումներ մինչև 2010 թվականը՝ օրենսդրության համապատասխան դրույթներն ապահովելու նպատակով, որոնք թույլ կտան ընկերություններին պատրաստել իրենց ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՖՀՄՍ:

2007 թվականի վերջին ՀՀ ֆինանսների նախարարությունը պայմանագիր է կնքել Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների գրասենյակի հետ (IASB/IASCF)՝ ՖՀՄՍ հեղինակային իրավունքի ձեռքբերման պարտավորությունից ազատվելու վերաբերյալ: Ձևավորվել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում բարեփոխումների իրականացման կոմիտե, ռազմավարության մշակման և ստանդարտներն արդիական պահելու մեխանիզմների բացահայտման նպատակով: Հայաստանը նաև դիտարկում է ՀՀ ֆինանսների նախարարությունից դուրս հաշվապահական հաշվառման և աուդիտի անկախ կարգավորող մարմին ձևավորելու հնարավորությունը:

Պետական ներքին ֆինանսական վերահսկողության ոլորտում Հայաստանը շարունակել է աշխատել ներքին աուդիտ մասին օրենքի ուղղությամբ: Օրենքի նախագիծը ներառում է դրույթներ ներքին աուդիտի համար կենտրոնական ներդաշնակեցման գործառույթ ձևավորելու վերաբերյալ: Կառավարման հաշվետվականության սկզբունքների ներդրումը Հայաստանում դեռևս գտնվում է շատ վաղ փուլում:

Ինչ վերաբերում է ձեռնարկատիրության քաղաքականությանը, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ԶԱԿ) շարունակում է մնալ ՓՄՁ-ների ֆինանսական աջակցություն տրամադրող, տնտեսական գործունեությունը խթանող և գործարար հնարավորությունները զարգացնող հիմնական գործակալությունը Հայաստանում: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ևս աշխատում է ՓՄՁ-ների ֆինանսական աջակցության տրամադրման ծրագրերի շրջանակներում՝ հիմնված արժեթղթերի ֆինանսավորման սկզբունքի վրա: Նախնական քայլեր են արվել նաև հանրային-մասնավոր հատված գործընկերության գաղափարի ներդնման և Գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ: 2008 թվականի հունիսից Հայաստանը Ձեռնարկությունների Եվրոպական ցանցի անդամ է:

5. Համագործակցություն արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտներում

Հայաստանը մասնակցում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև 2007թ. հոկտեմբերին համաձայնեցված Հարավային Կովկասի միասնական **սահմանային կառավարում** տարածաշրջանային ծրագրին: Ծրագրի նպատակն է բարելավել միջգերատեսչական համագործակցությունը՝ հզորացնելով մաքսային և սահմանային պահակակետային ծառայությունների կարողությունները: ՄԱԿԶԾ-ի (UNDP) գլխավորած իրականացնող կոնսորտիումն ընտրվել է տարվա վերջին՝ իրականացումը 2009թ. սկզբին սկսելու նպատակով:

2008 թ.-ի նոյեմբերին **միգրացիայի** ոլորտում ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է համապատասխանեցնել ապաստանի և փախստականների մասին ազգային օրենսդրությունը միջազգային և Եվրամիության չափանիշներին: Թայեքսը սատարել է միգրացիայի և ապաստանի հետ կապված հարցերի ազգային գործողությունների ծրագրի մշակմանը և 2008թ. նոյեմբերին երևանում փախստականների վերաբերյալ միջազգային օրենքի խորագրով սեմինար անցկացնելուն: Ոչ մի առաջընթաց չի գրանցվել միգրացիոն հոսքերը վերահսկող էլեկտրոնային տեղեկատվական բազայի տեսնակյունից: 2008թ. հուլիսին Հայաստանը աշխատանքային միգրացիայի կարգավորման օրենքի նախագիծ է մշակել:

Հայաստանը դեռ պետք է միանա «Ընդդեմ հրազենի ապօրինի արտադրության և թրաֆիքինգի» ՄԱԿ-ի կոնվենցիայի **անդրազգային կազմակերպված հանցավորության** երրորդ Արձանագրությանը: Ի հավելումն կոնվենցիայի վավերացմանն ու իրականացմանը, հետագա ջանքեր են պահանջվում նախկինում հաստատված երկու Արձանագրությունների ամբողջական և արդյունավետ գործնական իրականացումն ապահովելու համար:

Մարդկանց թրաֆիքինգի առնչությամբ թրաֆիքինգի դեմ պայքարի հանձնաժողովը նախարարության կարգավիճակ է ստացել 2007թ. վերջին, և թրաֆիքինգի ազգային գործողությունների ծրագրի երկրորդ երկամյա իրականացման պատասխանատուն է

դարձել (2007-2009թթ): Հայաստանը ապրիլին վավերացրել է «Գործողություն ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի դեմ» Եվրախորհրդի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսից: Թրաֆիքինգի դեմ պայքարի համձնաժողովը առաջարկություններ է մշակել թրաֆիքինգից տուժածներին աջակցելու վերաբերյալ: Համաձայն Գործողությունների ազգային ծրագրի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հանդիսանում է որպես պատասխանատու գերատեսչություն տուժածների աջակցության ռեսուրսների կենտրոնի համար: Առաջին անգամ 2009թ. քաղաքացիական հասարակության գործիչների հետ համատեղ պետական բյուջեն դրույթներ է նախատեսում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված գործողությունները ֆինանսավորելու համար՝ ներառելով տուժածների համար հատուկ ապաստանի գործընթացը:

Ինչ վերաբերում է **թմրադեղերի** դեմ պայքարին, ապա 2008թ. հունիսին քրեական օրենսգրքի փոփոխություններն իրավական սահմանումներ տվեցին թմրանյութերի թրաֆիքինգի քանակին և ծավալին, որոնք ենթակա են քրեական պատասխանատվության: Ինչևէ, ամբողջական ազգային հակաթմրադեղային ռազմավարության բացակայության պայմաններում, կանխարգելիչ և պատժող մեխանիզմների հավասարակշռումը և պատշաճ քաղաքացիական հասարակության ներգրավումն ու միջազգային ներդրումը, իրավական սանկցիաների ուժեղացումը չի տա սպասված արդյունքները:

Հայաստանը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը SCAD V ծրագրին, որը պետք է աջակցի ազգային պահանջարկի նվազեցման մեխանիզմների զարգացմանը՝ խրախուսելով իր հարևանների հետ մատակարարման նվազեցման և օրինապահության այլ խնդիրների կիրարկման տարածաշրջանային համագործակցությունը:

2008թ. հունիսին Հայաստանը վավերացրել է ԵԽ Հանցագործություններից ստացված եկամուտների լվացման, խուզարկման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման կոնվենցիան (CETS 198), որը ներքին օրենսդրությամբ ուժի մեջ է մտել 2008թ. հոկտեմբերին: 2008թ. մայիսին Ազգային ժողովը ընդունել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը և ՀՀ Կենտրոնական Բանկին իրավասություն է ընձեռել համակարգելու ազգային ծրագիրը: Սեպտեմբերին Վարչական օրենսգրքում կատարված փոփոխությունները հավելյալ պատիժ են ներառում հիմնադրամների և այլ ոչ-առևտրային մարմինների ֆինանսական հաշվետվությունների չբացահայտման և պետական հանձնարարագրված մարմինների վերահսկման և ստուգման ֆունկցիաների խոչընդոտների հետ կապված: Փողի լվացման, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման տեսանկյունից մարդկային և տեխնիկական ռեսուրսների շարունակական զարգացումները դեռ ընթացիկ մարտահրավերներ են:

Ոստիկանության և արդարադատության համագործակցության վերաբերյալ Եվրոպական կոնվենցիայի երկրորդ Արձանագրությունը Քրեական հարցերով փոխադարձ աջակցության վերաբերյալ ստորագրվել է 2009թ. մարտին՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո: 1980թ. Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական դրույթների վերաբերյալ Հաագայի կոնվենցիան մնում է չվավերացված: Այս տեսանկյունից անհրաժեշտ են ոստիկանության և այլ օրինապահ մարմինների միջև համագործակցության և համակարգման հետագա բարեփոխումներ: Այս տեսակ դասընթացի համար պատշաճ ռեսուրսների ապահովումը պետք է դիտարկվի որպես անհետաձգելի առաջնայնություն: Հայաստանը 1993թ. քաղաքացիական, ընտանեկան և քրեական հարցերում իրավաբանական աջակցության և իրավաբանական կապերի վերաբերյալ ԱՊՀ Մինսկի կոնվենցիայի ստորագրող կողմ է

հանդիսանում: Հայաստանը ստորագրել, բայց դեռ չի վավերացրել 1997թ. Եվրախորհրդի կոնվենցիայի լրացուցիչ Արձանագրությունը դատապարտված անձանց տեղափոխման վերաբերյալ:

6. Տրանսպորտ, էներգետիկա, բնապահպանություն, տեղեկատվական հասարակություն, հետազոտություն և զարգացում

Ինչ վերաբերում է տրանսպորտի ոլորտի վարչական կարողություններին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը կից ստեղծվել է Տրանսպորտի տեսչություն, որը զբաղվում է մեծամասամբ տաքսիների ու երթուղային տաքսիների վարորդների լիցենզավորման հարցերով, այնուամենայնիվ վարորդական իրավունքները դեռ տրվում են ճանապարհային ոստիկանության կողմից: Ավտոդպրոցները սեփականաշնորհվել են 2008թ.:

2008թ. ընթացքում Հայաստանը բարելավեց հասարակական տրանսպորտը՝ Երևանում որոշ նոր ստորգետնյա կայաններ կառուցելու որոշում ընդունելով: Ճանապարհային ոլորտում 2008թ. ապրիլին Հայաստանը նախաձեռնեց Ազգային ճանապարհային անվտանգության ռազմավարության և հնգամյա գործողությունների ծրագրի նախապատրաստման գործընթացը, սկսելու Ազգային ճանապարհային անվտանգության ռազմավարության իրականացումը մի ծրագրի ներքո, որը նախատեսում է ինստիտուցիոնալ կառուցվածքների ու գործընթացների բարելավումը Հայաստանում երթևեկության անվտանգությունը կառավարելու համար:

Երկաթուղային ոլորտում Երևան-Թբիլիսի երկաթգծի վերականգնումը սկսվել է 2008թ. հոկտեմբերի կեսերին: Հայաստանը պատրաստել է դեպի Իրան երկաթգծի հնարավոր կառուցման իրագործելիության հետազոտություն (երկաթգիծը կունենա մոտ 540կմ երկարություն, որից 480կմ կանցնի Հայաստանի տարածքով): Հայկական երկաթգծերը վերակազմավորվել են՝ կոնցեսիոն կառավարմանը փոխանցելով ուղեբեռների և ուղևորների հետ կապված գործընթացները: Պայմանագրերը ստորագրվել են 2008թ. փետրվարին և գործողությունները սկսվել են 2008թ. հունիսին: Կոնցեսիոն իրավունքը տրվել է 30 տարով՝ պայմանով, որ առաջին 10 տարուց հետո այն կերկարացվի 10 տարով: Բոլոր ենթակառուցվածքները դեռևս հանդիսանում են պետական սեփականություն, բայց շարժակազմները դրված են սեփականաշնորհման: Կոնցեսիոն պայմանագիրը սահմանում է, որ կոնցեսիոնեռը ցանցում պետք է ներդնի առնվազն 0.5 մլդ եվրո:

Չնայած Հայաստանի և Եվրամիության միջև օդային երթևեկության աճին, փոքր մրցակցության պատճառով այն մնում է սահմանափակված: Երկկողմ հարաբերությունների խորացմանն ուղղված կարևոր քայլ էր Հայաստանի և Եվրոպական Համայնքի միջև 2008թ. դեկտեմբերին օդային տրանսպորտի հորիզոնական համաձայնագրի ստորագրումը: Հայաստանը պետք է շարունակի ավիացիոն անվտանգության ոլորտի ներդաշնակեցումը Եվրամիության չափանիշներին և սկսի լիցենզավորման կանոնների համապատասխանեցման գործընթացը: Եզրափակիչ փուլում է գտնվում Թվինինգ ծրագիրը, որն ուղղված է ավիացիայի համատեղ մարմնի (JAA) առաջարկների իրականացմանը՝ ավելի կոնկրետ նպատակաուղղելով Հայաստանի հարաբերությունների խորացման նախապատրաստական աշխատանքները Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության (EASA) հետ:

Հայաստանը շարունակել է իրականացնել էներգետիկ ռազմավարությունը, ի դեպ ավարտին հասցնելով նոր ատոմակայանի վերաբերյալ իրագործելիության հետազոտությունը: Հայաստանը պատրաստվում է շահագործումից հանել Մեծամորի ԱԷԿ-ը (MNPP/ՄԱԷԿ) մինչև 2016թ. և պատրաստ է այն շահագործումից հանել մինչև նախատեսված ժամկետի ավարտը՝ հաշվի առնելով, որ առկա է այլընտրանքային փոխարինող հնարավորություն: Եվրամիությունը ատոմակայանի փակումը պահանջում է մինչ այդ ժամկետը: 2008թ.- Հայաստանը հետամուտ եղավ Մեծամորի ԱԷԿ-ի անվտանգության համակարգի արդիականացմանը և ուժեղացրեց միջուկային անվտանգության կարգավորող մարմինը: 2008թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցավ Մեծամորի ատոմակայանի անվտանգության համակարգի արդիականացման ծրագրի երրորդ համակարգող հանդիպումը Միջազգային ատոմային էներգիայի գործակալության և դոնորների մասնակցությամբ: Ռուսաստանի Դաշնությունը միացել է այս ծրագրին: Միջուկային անվտանգությունը կարգավորող մարմինը մշակել է միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարությունը: Հայաստանը առաջադիմել է չոր միջուկային վառելիքի պահեստավորման հարմարանքների կառուցման մեջ: Հինք ընդունելով 2007թ. Մեծամորի ատոմակայանի շահագործման դադարեցման ռազմավարությունը՝ Հայաստանը սկսել է շահագործման դադարեցման մանրակրկիտ ծրագիր մշակել: Հայաստանը շարունակում է միջուկային շահագործման դադարեցման ֆոնդ նախատեսել և Ռուսաստանի Դաշնության հետ համատեղ ուրանի պաշարների նոր գնահատում է նախաձեռնել:

Հայաստանը էլեկտրականության և գազի ոլորտներում ընդունել է իրականացնող օրենսդրություն: Այն հետամուտ է եղել ավանդական էլեկտրակայանների կառուցմանը՝ ներառյալ հիդրոէլեկտրակայանները, և էլեկտրաէներգիայի ու գազի ենթակառուցվածքների վերականգնմանը: Հայաստանը շահագրգռված լինելով տարածաշրջանային էլեկտրաէներգիայի շուկայի զարգացմամբ՝ շարունակում է քննարկումներն Իրանի և Վրաստանի հետ էլեկտրաէներգիայի լրացուցիչ միացումների շուրջ: Հայաստանը դադարեցրել է գազի գնի համար տրվող դոտացիաները 2008թ. մայիսից: Հայաստանը և Իրանը սկսել են երկրորդ գազատարի կառուցումը: Հայաստանն աշխատել է գազի պահեստավորման ստորգետնյա հարմարությունների ընդլայնման վրա: Այն հետամուտ է եղել նավթի գտման գործարանի կառուցման շուրջ քննարկումները: Հայաստանը նախաձեռնել է էներգիայի արդյունավետության և ինքնավերականգնվող էներգիայի վերաբերյալ գործողության ծրագրի մշակումը: Այն շարունակել է տարածաշրջանային «Բաքվի Նախաձեռնության» իր մասնակցությունը Եվրամիություն-Սևծովյան/Կասպյան էներգետիկ համագործակցության համար:

Հայաստանը շարունակել է **կլիմայի փոփոխման** իր երկրորդ ազգային պաշտոնական հաղորդագրության մշակումը, որը նաև կներառի ջերմոցային գազերի պահեստավորումը, կլիմայի ոլորտի ռազմավարությունը, օրենսդրությունը և ազգային ադապտացիոն միջոցառումները: Կատարվել է Մարմարիկ գետի ավազանի խոցելիության և հարմարվողականության գնահատում: Հայաստանը քայլեր է ձեռնարկել՝ ուղղված “Մաքուր զարգացման մեխանիզմ” ծրագրերի մշակմանը և հաստատմանը, ինչպես նաև դրանց թերություններին անդրադառնալուն: Հայկական Մաքուր զարգացման մեխանիզմի 16 ծրագրերից 4-ը գրանցվել են ՄԱԿ-ի մակարդակում: Եվրահանձնաժողովը շարունակում է աջակցել Հայաստանին Կիոտոյի արձանագրության իրականացման հարցում: Հայաստանը դեռ պաշտոնական դիրք չի ընդունել 2012թ. հետո սպասվող ռեժիմի կապակցությամբ:

Հայաստանն ընդունել է երկրորդ ազգային **բնապահպանական** գործողության ծրագիրը 2008-2012թթ համար: Կայուն զարգացման ծրագիրը, տե՛ս 3 բաժին, պարունակում է բնապահպանության ոլորտի մի քանի նպատակներ: Օրենսդրական դաշտը դեռ

պահանջում է հետագա զարգացում, մասնավորապես՝ օրենսդրության իրականացման տեսանկյունից: Բուսական և կենդանական աշխարհի մասին օրենքներում փոփոխություններ են կատարվել, կառավարության որոշումներ են ընդունվել նաև հատուկ պահպանվող տարածքների, որսորդության, ջրերի և ազգային հուշարձանների, օդի աղտոտվածության, Սևանա Լճի և նրա ազգային պարկի մասին: Բնապահպանության վերաբերյալ ակտը, ինչպես նաև բնապահպանական փորձագիտության, գենետիկորեն փոփոխված օրգանիզմների և համապատասխանության ինքնավերահսկողության մասին օրենսդրությունը դեռ նախապատրաստման ընթացքում են: Նյութին վերաբերող ոչ մի ռազմավարություն կամ ծրագիր չի ընդունվել 2008թ. ընթացքում: Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ամփոփ նախագիծը ինչպես նաև քիմիական նյութերի ազդեցությունների նվազեցման ազգային ռազմավարությունը նախապատրաստման ընթացքում են: Աշխատանքներ են տարվում գոյություն ունեցող ռազմավարություններն ու ծրագրերը զարգացնելու և իրականացնելու համար, բայց շարանակական ուշադրություն է պահանջվում: Ջանքեր են պահանջվում նաև ուժեղացնելու վերահսկողությունը, ինչպես նաև կիրարկումը:

Երկրի բոլոր մակարդակներում վարչական կարողությունների հետագա ուժեղացումը դեռևս գլխավոր մարտահրավեր է: Իշխանությունների միջև աշխատանքի համակարգումը ուշադրություն է պահանջում: Որոշակի գործունեություն է ծավալվել միավորելու բնապահպանական դիտարկումներն այնպիսի ոլորտների հետ, ինչպիսին էներգետիկան է: Հայաստանը վերջերս բնապահպանության վիճակի վերաբերյալ զեկույց չի հրապարակել: Ինչ վերաբերում է տեղեկատվության հասանելիության և հասարակական մասնակցության՝ Տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակական մասնակցության և բնապահպանական հարցերում արդարադատության հասանելիության մասին Արհուս կոնվենցիայի իրականացումն ապահովող միջգերատեսչական հանձնաժողովն առաջին անգամ հանդիպել է 2008թ. դեկտեմբերին: Հայաստանի Արհուս կենտրոնները շարունակում են գործել: Այնուամենայնիվ, ընթացակարգերը և հասարակության հետ խորհրդատվությունները բնապահպանական ազդեցության գնահատման համատեքստում պահանջում են հատուկ ուշադրություն: Որոշ քայլեր են կատարվել ռազմավարական բնապահպանական գնահատումների իրականացումը խթանելու ուղղությամբ: Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի համար, խնդրում ենք նայել տարածաշրջանային համագործակցության բաժինը:

Հայաստանը պատրաստվում է վավերացնել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնապահպանության ազդեցության գնահատման կոնվենցիային կից Բնապահպանական ռազմավարական գնահատման արձանագրությունը սահմանային ենթատեքստում: Այնուամենայնիվ, զգալի առաջընթաց չի գրանցվել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Սահմանային ջրային ռեսուրսների ու միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիայի ստորագրման հարցում: Ավելին, մի քանի արդեն վավերացված համաձայնագրերի իրականացումը պահանջում է հատուկ ուշադրություն: Հայաստանը մասնակցել է Եվրամիության ջրային նախաձեռնությանը, ներառյալ՝ ազգային քաղաքականության երկխոսությունը: Եվրահանձնաժողովի և Հայաստանի միջև տեղի է ունեցել համագործակցություն և տեղեկատվության փոխանակում ջրի, անտառային տնտեսության, թափոնների կառավարման և բնապահպանական տվյալների ոլորտում :

Այլ թեմաներ, ինչպիսիք են օդի որակը և քաղաքացիական պաշտպանությունը նախանշվել են որպես հնարավոր սերտ համագործակցության թեմաներ:

Հայաստանը դեռևս չի մշակել ազգային քաղաքականություն **տեղեկատվական հասարակության** կիրառումը զարգացնելու և օգտագործելու ուղղությամբ: Անհրաժեշտ է հզորացնել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վարչական կարողությունները՝ ապահովելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում որպես լիիրավ գործող և անկախ կարգավորող մարմին: Շուկաներում մրցակցությունն ավելացավ, երբ 2008թ. հոկտեմբերին տրամադրվեց երրորդ GSM արտոնագիրը և երրորդ սերնդի (3G) բջջային ծառայությունների արտոնագիրը: Ինտերնետային հեռախոսակապի ոլորտում երեք արտոնագիր շնորհվեց 2008թ. մարտին: Այնուհետև 2008թ. ապրիլին թողարկվեց շուրջ 30 արտոնագիր հաղորդակցության ոլորտում ֆիքսված ծառայությունների համար: 2008թ. օգոստոսին ֆիքսված ցանց ապահովող օպերատոր ԱրմենՏելի նկատմամբ սահմանվեց շուրջ 1 մլն ԱՄՆ դոլարի տուգանք տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ինտերնետային շուկայում իր գերակա դիրքը չարաշահելու համար: ԱրմենՏելը նպաստավոր պայմաններ ստեղծեց իր “Hi-line” ինտերնետային ծառայության համար՝ հրաժարվելով վարձակալության հիմունքով կապ տրամադրել իր մրցակիցներին: Վերջինս 80%-ով թվայնացրել է իր ցանցը և մտադիր է 2009թ. ներկայիս օպտիկամանրաթելային ցանցն ընդլայնել և հասցնել 100%-ի:

Աուդիովիզուալ ոլորտում առկա է այն հանգամանքը, որ Հայաստանը դեռևս պետք է վավերացնի Եվրախորհրդի սահմանային հեռուստատեսության մասին կոնվենցիան, որը Հայաստանի համար չափազանց դժվարացնում է այլ երկրներից հեռուստատեսային հեռարձակումների ազատ ընդունմանը և կրկին հեռարձակմանը: Հայաստանը ընդունել է ազգային ծրագիր աուդիովիզուալ ոլորտում, որը սահմանում է որոշ օրենսդրական պահանջներ, որոնք անհրաժեշտ են ԵՄ օրենսդրությանը մոտարկելու համար: 2008թ. հունիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միաձայն որոշեց, որ Հայաստանը խախտել էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը (խոսքի ազատություն), քանի որ համապատասխան մարմինները հրաժարվել էին բավարարել հայտատուների կողմից հեռարձակման արտոնագրերի համար ներկայացված պահանջագրերը:

Ինչ վերաբերում է **հետազոտական և նորամուծական** գործունեությանը, Հայաստանի հետազոտական կարողությունները և ներդրումները մնում են շատ համեստ: Մասնակցությունը հետազոտությունների շրջանակներում 7-րդ ծրագրին աճել է վեցերորդի համեմատությամբ: Գլխավոր առաջընթացը ձեռք է բերվել “Մարի Կյուրի” գործողությունների և R&D կարողությունների զարգացման (հետազոտությունների ենթակառուցվածքներ) ներքո: Այնուամենայնիվ, դիմումների ամբողջական քանակը դեռ համեմատաբար ցածր է: Գաղափարների և տեխնոլոգիաների հայկական կենտրոնի մասնակցությունը IncoNet EECA (S&T Միջազգային համագործակցության ցանց Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար), որն իր գործունեությունը սկսել է 2008թ. հունվարին, Հայաստանին թույլ է տալիս հնարավորինս օգտվել տարածաշրջանային համագործակցության ընթացիկ գործընթացներից:

7. Մարդկանց միջև կապեր, կրթություն և առողջապահություն

2008-15թթ համար ընդհանուր կրթական բարեփոխումների ծրագիրը դեռ պետք է ընդունվի՝ նպատակ ունենալով մոտ ապագայում ուժեղացնել և բարելավել կրթական դրույթները բոլոր մակարդակներում և պարտավորությունների ենթատեքստում խթանել

երկարաժամկետ ուսուցումը՝ **կրթության** ոլորտում հանրային ծախսերը ավելացնելով : Այս առումով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համապատասխան մեխանիզմների զարգացմանը, որոնք ուղղված են հասանելիության և արդար ֆինանսավորման հետ կապված հարցերին , ինչպես նաև թիրախային քաղաքականություններին՝ խթանելու վաղ հասակից երեխաների կրթությունը և պայքարելու դպրոցից դուրս մնալու մեծաքանակ դեպքերի դեմ: Կառավարումը և հաշվետու լինելը բարելավելու և միջնակարգ և բարձրագույն կրթության ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ են լրացուցիչ միջոցառումներ, մինչդեռ խորհուրդ է տրվում քաղաքացիական իրավունքը և մարդու իրավունքները ներառել ուսուցման ծրագրում:

2008թ. նոյեմբերին **բարձրագույն կրթության** հարցերով աշխատանքային խումբ է ձևավորվել, նախապատրաստելու Որակի երաշխավորման ազգային կենտրոնի հիմնադրումը, Բարձրագույն կրթության որակի երաշխավորման եվրոպական ասոցիացիայի չափանիշներին և Բոլոնիայի սկզբունքներին համապատասխան: Օրենսդրական նախագիծ է ներկայացվել Ազգային ժողովի աշնանային նստաշրջանին: 2008թ. սեպտեմբերին Հայաստանը Եվրախորհրդի հետ համատեղ կազմակերպել էր որակավորումների վերաբերյալ համաժողով, որին մասնակցում էին Մոլդովայի և Ուկրաինայի ներկայացուցիչները: Ավելին, Հայաստանը 2008թ. նոյեմբերին մասնակցել է Վրաստանում տեղի ունեցած Եվրախորհրդի Բոլոնիայի գործընթացի շրջանակներում Եվրոպական որակավորումներ և ինքնագնահատման հարցեր խորագրով համաժողովին: Մարտին Հայաստանը դարձավ Եվրոպական որակի երաշխավորման ռեգիստրի լիիրավ անդամ:

Հայաստանն ակտիվորեն մասնակցել է Տեմպուս ծրագրին՝ օգտվելով Տեմպուս IV առաջարկներ ներկայացնելու առաջին հրավերի ներքո 4 ծրագրերից: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը Եվրահանձնաժողովի հետ համատեղ ընտրել է բարձրագույն կրթության բարեփոխումների 4 փորձագետների որպես 2008-2010թթ Տեմպուսի գործողությունների մի մաս բարձրագույն կրթության բարեփոխումներին արդյունավետ նպաստելու համար:

7 հայ ուսանող և 2 հետազոտող օգտվել են Երասմուս Մոնդուս կրթաթոշակներից: Արտաքին համագործակցության պատուհանը օժանդակել է հայ ուսանողների և գիտնականների շարժունակությանը: Ի հավելումն, 12 հայ ուսանող կրթաթոշակ է ստացել Եվրախնտեզրման ուսուցման մագիստրական աստիճանի համար, որը նախատեսված է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի տարածաշրջանի ուսանողների համար 2008-2009թթ հատուկ պիլոտային ծրագրերի շրջանակներում:

Ինչ վերաբերում է միջին մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը (ՄԿՈՒ)՝ ՀՀ կրթության ու գիտության նախարարության միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) աշխատանքային խումբը Եվրահանձնաժողովի աջակցությամբ ընտրել է 12 ուսումնական հաստատություն, որպես տարածաշրջանային բազմաֆունկցիոնալ ՄԿՈՒ կենտրոններ՝ աշխատանքի շուկայի պահանջներին համահունչ ունակությունների վրա հիմնված նոր ուսուցման ծրագրեր տրամադրելու համար: Միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը ստեղծվել է Կրթության ազգային ինստիտուտի հովանու ներքո, որն էլ 2008թ. փետրվարին որոշում ընդունեց հաստատել ՄԿՈՒԶԱԿ-ի կանոնադրությունը, կառուցվածքը և գործառույթները: 2008թ. դեկտեմբերին որոշում է ընդունվել նոր եռակողմ Միջին մասնագիտական կրթության և ուսուցման ազգային խորհուրդ (ՄԿՈՒԶԱԿ) հիմնելու վերաբերյալ: ՄԿՈՒ Ազգային խորհուրդը այդ նույն ամսին ունեցել է

առաջին հանդիպումը: Սոցիալական երկխոսության և ունակությունների վրա հիմնված որակավորման չափանիշների զարգացման շուրջ աշխատանքները շարունակվում են, պատրաստվել է նաև մեծահասակների կրթության մասին օրենքի նախագիծը: Ինչևէ, հավելյալ եռանդ է պետք ներդնել բարեփոխելու միջին մասնագիտական կրթությունը, միջազգային մրցունակությանը հարմարեցված բարձորակ և ունակ աշխատուժի ներգրավման և ապահովման համար: Սա որքան կառուցվածքային և վերաբերմունքի փոփոխության հարց է, այնքան էլ ռեսուրսների մոբիլիզացիա է:

2008թ. Եվրոպական **երիտասարդական** հիմնադրամը քաղաքացիական հասարակության գործիչների հետ համատեղ երիտասարդության համար կազմակերպել է կրթական և տեղեկատվական սեմինարներ և ֆինանսավորել է մի քանի ծրագիր, որոնք վերաբերում են այնպիսի թեմաների, ինչպիսիք են նախագահական ընտրությունները, միջմշակութային երկխոսությունը, գենդերային խնդիրները, խաղաղությունը և հակամարտության լուծումը: Երիտասարդությունը գործողության մեջ ծրագրի ներքո հայ երիտասարդների և երիտասարդ աշխատողների մասնակցությամբ որոշ երիտասարդական ծրագրեր աջակցություն են ստացել, ներառյալ երիտասարդության, խաղաղության և ՋԼՄ-ի վերաբերյալ ծրագիրը, որը կազմակերպվել է 2008թ. հուլիսին: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը նույնպես ակտիվորեն աջակցել է երիտասարդության երկխոսությանն ու նախաձեռնություններին:

ՀՀ մշակույթի **նախարարությունը** մշակել է մշակույթի զարգացման քառամյա ռազմավարություն (2008-12թթ)՝ ուշադրությունը կենտրոնացնելով մշակութային քաղաքականության, մշակութային ժառանգության, միջազգային համագործակցության, ոչ նյութական մշակույթի թվայնացման և ազգային մշակույթի խթանման արդյունավետ համակարգմանը: Հայաստանը դեռ չի վավերացրել ՅՈՒՆԵՍԿՈՅի մշակութային արտահայտումների բազմազանության պաշտպանման և խթանման մասին կոնվենցիան: Ուշադրությունը պետք է ուղղվի մշակույթի արդյունավետ ապակենտրոնացման դյուրացմանը՝ ապահովելով քաղաքացիական ու երիտասարդության մաքսիմալ մասնակցությունը ռազմավարության իրականացմանը:

Հայաստանը շարունակել է **առողջապահության** ոլորտի բարեփոխումները՝ բարելավելով առաջնային բուժօգնությունը և առողջության ապահովագրումը: ՀՀ կառավարությունն 2008-2012թթ ծրագրի ներքո ավելացրել է ոլորտի պետական ֆինանսավորումը: Հայաստանի նպատակը, ինչպես վերջերս նշված է Կայուն զարգացման ծրագրում, ոչ պաշտոնական վճարումների նվազեցումն է, որակի բարձրացումը և առողջապահական ծառայությունների հասանելիության դյուրացումը: Հայաստանը մշակել է առողջապահության մասին օրենք, որը դեռ պետք է ընդունվի: Հայաստանը շարունակել է կարևորել վարակիչ հիվանդությունների դեմ պայքարը, ներառյալ՝ ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ը և տուբերկուլյոզը: Ինչպես 2007թ., երկիրը մասնակցել է առողջապահության տեղեկատվության և գիտելիքների ոլորտում իրավասու մարմինների ԵՄ ցանցին :

8. Ֆինանսական համագործակցություն – 2008թ. կարևոր փաստերն ու թվերը

ԵՀԳԳ-ի ֆինանսական փաթեթը Հայաստանի համար 2007-2010թթ Ազգային ինդիկատիվ ծրագրի ներքո 98.4 մլն եվրո է: Ծրագիրը նախատեսում է կարևոր քաղաքականությունների նպատակների իրականացման աջակցություն, ինչպես որ սահմանված է ԵՄ - Հայաստան ԵՀՔ ԳԾ և նախատեսում 3 հիմնական

առաջնայնություններ՝ աջակցություն ժողովրդավարական կառույցների և արդյունավետ կառավարման ամրապնդմանը, աջակցություն կարգավորիչ բարեփոխումներին և վարչական կարողությունների ստեղծմանը, աջակցություն աղքատության կրճատմանն ուղղված ջանքերին:

2008թ. Եվրահանձնաժողովը շարունակել է աջակցել Հայաստանում ազգային բարեփոխումներին ուղղված ջանքերին և ծրագրել է 24մլն եվրոյի օգնություն ԵՀԳԳ-ի շրջանակներում: 2008թ. տարեկան գործողությունների ծրագիրը ներառել է ոլորտի բյուջետային աջակցություն արդարադատության ոլորտի բարեփոխումների համար:

Թվինինգ և Թայքս գործիքներն առաջարկել են ԵՀԲ ԳԾ-ի իրականացման աջակցությանն ուղղված ճկուն միջամտություն, մասնավորապես՝ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և օրենսդրության մոտարկման ոլորտներում: Թվինինգի մարդու իրավունքների գրասենյակի աջակցման և արտաքին տնտեսական համագործակցության և ներդրումային քաղաքականության վարչության աջակցության ծրագրերը սկսվել են 2008թ.: Երրորդ Թվինինգ ծրագիրը, ուղղված Քաղաքացիան ավիացիայի գլխավոր վարչության (ՔԱԳՎ) կարողությունների ուժեղացմանը, կսկսվի 2009թ.: 2008թ. Սիզմա առաքելությունները պետական գնումները և քաղաքացիական ծառայության բարեփոխումները նախանշել են Սիզմայի ապագա ներդրումների ոլորտներ:

Ոլորտներին տրամադրվող բյուջետային աջակցությունը միջին մասնագիտական կրթության և ուսուցման համար 2007թ. Ազգային գործողության ծրագրի շրջանակներում բավարար էր: Ընդհանուր առմամբ Հայաստանը ցուցաբերում է բավարար պատասխանատվություն ԵՄ աջակցությանը և ԵՄ ֆինանսավորման համար վառ արտահայտված կարողություն է դրսևորում:

Հայաստանն օգտվում է նաև ԵՀԳԳ-ի ներքո բազմերկյա (ներառյալ Հարևանության ներդրումային գործիքը), տարածաշրջանային ծրագրերից, ինչպես նաև հորիզոնական թեմատիկ ծրագրերից, ինչպիսիք են ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնությունը (EIDHR) և «Ոչ պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները զարգացման մեջ» ծրագրին: 2008թ. Եվրահանձնաժողովը 1.5 մլն եվրոյի պայմանագիր է ստորագրել (2007թ. բյուջե) «Ոչ պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները զարգացման մեջ» ծրագրի և 1.2 մլն եվրո ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնության ծրագրի շրջանակներում (2007 և 2008թթ բյուջեները համատեղ):

Հայաստանը մասնակցում է Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրին (17.306 մլն եվրո 2007-2013թթ ժամանակահատվածում ամբողջ ծրագրի համար), որը ընդունվել է 2008թ.: Այս ծրագրերի միջոցով Սև Ծովի սահմանամերձ ծովային տարածքների բնակչությունը ֆինանսական օգնություն կստանա համատեղ համագործակցային ծրագրերի համար, որոնք ուղղված կլինեն կայուն զարգացմանն ու մարդկանց շփումների խթանմանը:

Միջուկային անվտանգության Համագործակցության Գործիքի ներքո 2007թ. գործողությունների ծրագրի շրջանակներում հատկացվել է հետագա 7.2 մլն եվրոյի աջակցությունը, քանի որ Եվրահանձնաժողովը շարունակել է Մեծամորի ատոմակայանի մինիմալ անվտանգության ապահովման չափանիշների աջակցությունը (2006թ. բյուջե):

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու է Եվրահանձնաժողովի աջակցության համակարգման և դրնորների միջև համակարգումն ապահովելու համար: